



#### 4. ԼԱՎՈԳ, ՀԱՍՇՈՂ

Թակավորը կեղի, էնոր մեկ տըղա կեղի: Էն տըղեն կեղի տասնուխինգ տարեկան, օրըմ կերթա քաղքի մեչ կան գալու:

Կը տեսնի հըմեն մարթ էմալ քաղքի մեչ ջուխտ-ջուխտ կան կը գան:

Կը գա տուն, խոր կասա. - Դադի՛, քաղքի մեչ ես հեսօր գանցի կան գալ, տեսա հըմեն ջուխտ-ջուխտ կան կը գան, էնոնք ի՞նչ են:

Թակավոր կասա. - Ջավակս, էտոնք հիրարու դաստաբրա են: Իրարու ծեռներ պըռնած կան կը գան, վըր իրարու կուրախնան: Էնպես կանիվեք, քիչեք կան կը գան:

Կասա. - Դադի՛, ես էլ ծի մեկ դաստաբրա տը պըռնեն, խեստ կան գան, իմ սըբըր չէլնի:

Թակավոր կասա. - Լա՛վ կեղի, գըռնա՛ մեկըմ կըռդի՛, էնու խալա՛վ-խագուստ կտրի, կերցո՛ւ, խըմցո՛ւ, թըխ եղի քե ախպըրգյիր, խըն քե կան գա:

Թակավորի տըղեն էլա՛վ, գըռնաց չարսու մեչ: Աչկեց՝ մեկ ջըհել տըղեն մ՛են դիխեն կը գյեր:

Տըղեն կանչեց:

Տըղեն տանցավ իշկաց, օր թակավորի լաճն էր: Տըղեն վախեցավ, թե թակավորի լաճ ընչի՞ ծի կը կանչա:

Թակավորի լաճն ասաց. - Մը՛ վախենա, տըղա՛: Ես կուգեմ, օր քեգ տանեն, էնեմ ծի ախպըրգյիր:

Տըղեն ասաց. - Լա՛վ, ես հալա՛ շնորհակալ կեղիմ:

Ասաց. - Քու անուն ի՞նչ ա:

Ասաց. - Իմ անունը Լնվոգ ար:

Թակավորի տղղեն առավ Լնվոգ, գյըննց պննղնիս: Պննղնիսից էլնն, գննցին տուն, մեկ կանոնավոր ծեռքըն սննղոննգամի շոր խագիւց, ու հիրարու ծեռ պղոննեցին, ինգնն շուկի մեչ, կան կը գնն:

Հիրիկուն էկան տուն:

Թակավոր ասաց. - Ջավակս, քյե ախպըրգյիր պերի՞ր:

Ասաց. - Դննղո՞, ծի ախպըրգյիրըն պերի, համա՞ խընդ իմ մոր ծնած գավակ հնվելի լավ ար:

Խերն ասաց. - Պի՞, մեկ նայեմ:

Էպիր: Թակավոր տեսավ, օր էնպես խորոտ ջըհել մ՛ ար, օր աննման ար:

Թակավոր սիրով ընդունեց:

Լնվոգ ինքն վըր ուր մտածեց, ասաց. «Փանքյ քյե, Աստվա՛ծ, ես վի՛ր տղղեն էր, որտե՛ղ էկար, ինգն: Օր Աստված տար, չարսա՛ տու վի՞ր տղղեն ես»:

Քննի՛մ տարի թակավորի ախչիկըն էնոնց մատանին էրագի մեչ փոխած են:

Տըղեն հիշարցավ, տեսավ օր ուր մատնիկն փոխված էր, էրագի մեչ տեսած ախչըկար մատնիկն էր: Վըր էն ախչըկեն սիրահարվավ:

Էլ ոչ խաց կուտեր, ոչ ճուր կը խըմեր, գյիշեր-ցերեկ տրտում էր:

Թակավոր օրըն կանչեց տղղին, ասաց. - Ջավակս, տու շատ տխուր-տրտում կէրևաս ու շատ լըղճորվեր ես, քու մննղեն ի՞նչ ար, չուն մըկար տու ուրախ էր, քյե ի՞նչ ար էղեր:

Խոր չասաց: Ասաց. - Խիվանդ եմ:

Խեր հեքընմիր էպե, նայեցին, օր սութ կասեր՝ սիրու էր առե:

Թակավոր ինքքան էրաց, տղղեն չասաց՝ խի ինչի՞ վերեն ար սիրու առե:

Վերչ՝ թակավոր կանչեց Լնվոգին, ասաց. - Գյըննն՛, քու ախպըրգյրից խննցըրար, տուքյ դննստննրար եքյ, բնլկո քյե ասար, ծի չասար էնու խիվընդութին ինչից ար:

Լնվոգ գյըննց Հննղղի հողեն:

Ասաց. - Հննղղո՞, էտար քու տրտմութեն, ցավ ծի ասար: Կար

սես՝ ասա, չըս ասի՝ կը թոնհիմ կերթամ, էլ քյե ախալըրութին չեմ էներ:

Թակավորի տըղեն շիվարած մընաց: Ասաց. «Ասե՛մ, իմ խեր, մեր կը լըսնան, ձի ամոթ ա: Չասե՛մ՝ իմ ախալըրոյի կերթա»:

Ասաց. - Լանվո՛գ, իմ տրտմութեն գինա՞ս ինչ ա: Ես էրագի մեչ մեկ թակավորի ախչիկըմ տեսեր եմ, իմ մատնիկն խընդ էնու մատնիկին փոխեր եմ: Էնու սիրուց՝ սիրու եմ առե, էն պատճառ՝ խիվընդցեր եմ:

Լանվոգ գյընաց, թակավորին պատմեց, ասաց. - Տըղայի տրտմութեն էսա պանից ա, էրագի մեչ թակավորի մ'ախչիկ տեսեր ա, սիրահարված ա էնու վըրեն:

Թակավոր յոթ տարի աշխատավ, չըկարցավ, օր ախչիկ պիրեր:

Օրըմ Լանվոգ ասաց. - Թակավոր՛, մեկ քիչըմ անքան տուր խընդ ձիկ, մի տարվա մ'էլ գանխիրա տուր, ես էրթամ, թի կարցա տը պերիմ, թի չըկարցա, թըխ չէղի:

Թակավոր ասաց. - Շա՛տ աղեկ, թի էսպես պարիրարութին էնես, իմ ճոչ տըղեն տիւն ես:

Թակավոր անքան էտուր, գանխիրա էտուր էնոնց տարվա՛մ: Աստված կանչեց ու էլանվ ճանքանխ: Խետն առեց Դանըդ ու անքյըրներ:

Շատ, քիչ գյընաց, շատ, քիչ Աստված գինա, մեկ գիշեր պառկեր էր Լանվոգ, էրագի մեչ մեկ մարթըմ տեսավ: Էտա մարթ էտոր ասաց. «Վանդ ծեր հանե՛ծ մեկ ճոչ սարըմ կա: Չէղի էն սարի մեչ թանփեքյ, տը վնասեքյ»:

Առավոտու՛ն էլանվ, էպանց, քըշեց: Խասավ սարի մոտ, հեվար էր:

Լանվոգ ասաց. - Տը քշեմ, սար ընցեմ: Էսա սար մե վնաս կա:

Թակավորի լաճն ասաց. - Չէ՛, ջանըմ, ամլե մ'անքան գան խընդ մե կա, ի՞նչ վնաս տ'էղի:

Թակավորի լաճ թանփեց սարի մեչ:

Էն տեղ վըրաներ գանկին, պառկան: Դամա Լանվոգ էրագի մեչ օր տեսեր ա, չըգըխընա քընի:

Մընաց չուր կեսգիշերին, Լանվոգ տեսավ օր հա՛, ծեն կը գան վըրաներու մեչ:

Էլնվ, գյըննաց վըրններու մեչ աչկեց, տեսավ, օր մեկ մարթըմ էկե, չու՛մ եռու՛ն անքնար հնավել կա, ճարտեր ա:

Գյըննաց մարթիւ հնռե՛ծ:

Ասաց. - Ջա՛նըմ, քիւ անու՛ն տու, խի ի՞նչ մարթ ես, էկեր, ես ի՛մ անքնար ճարտեր ես:

Էտա մարթն ասաց. - Ի՛մ անու՛ն քիւ ինչո՞ւն ա պետք: Արի՛, ես, տու կըռվըտի՛նքջ. Աստված յան կը տա քյե, յան կը տա ծի:

Կըռվան չու՛մ առավոտման տեմ: Թակավորի տըղեն օր քըլ-նուկ ա՛ ըսկի խնքնար չու՛նի:

Օր եղավ առավոտու, էտա մարթ Լնվոգու ծեռ պըռնեց, ասաց. - Ըստեղ կըռվու տեղ չի, քյե՛լն՛ էրթանքջ ի՛մ սարեն, ես, տու կըռվե՛նքջ:

Առավ Լնվոգ, գյըննաց մեկ ավուր ճանքնիս, նոր խասավ էնու սարեն:

Թակավորի տըղեն քըլնուց հիշարցավ, ասաց. - Կանչե՛քջ Լնվոգ, թի գն, պնռնանքջ էրթանքջ, հանգան ա:

Գանցին, Լնվոգի վըրննի մեչ աչկեցին, օր Լնվոգ չըկա: Ասքըրի վըրններու մեչ աչքեցին, էլըմ չըկա:

Տեսան, օր քսան, եռու՛ն անքնար ճարտուկ էտա տեղ, Լնվոգ չըկա:

Թակավորի տըղեն ասաց. - Վա՛խ, վա՛խ, ինքյն ասաց թե՛ սարի մեչ չըթնլի՛մ, մե վնաս կա, ես էնու խոսք չէրեցի: Մըկա տնռնամ, էրթան տու՛ն, չէղի, մընամ էսա տեղ՝ չէղի: Յե՛յ, Աստված, տու մեկ ճար մ՛ էնես ծի:

Ինքյն կըսկըծու՛ պառկավ էնու վըրննի մեչ: Ասքնրն էլ մընաց էտա տեղ:

Մենքջ տնռնանք Լնվոգի վերեն:

Էտա մարթ Լնվոգ տարավ ուր տու՛ն, խաց կերցուց, չայ խըմցուց, չու՛մ առավոտու՛ն, նոր ըլնեն կըռվին:

Լնվոգ ասաց. - Մա՛րթ, քիւ անու՛ն ի՞նչ ա:

Ասաց. - Ի՛մ անու՛ն Դին Մանգաննա յա:

Դին Մանգանին էնպես սիրու՛ն կնիկըմ կեր, էտա կընգան աչկ ինգեր էր Լնվոգ:

Խըլխու՛ն էլնն կռիվ: Օր Լնվոգ գոռզ կը զաներ էտա Դին Մանգանին, հեչ պա՛՛մ չէնե, օր էնի կը զանի Լնվոգին, փարչա-փարչա կէնա, Լնվոգից արու՛ն կը պերա: Կըռվան չու՛մ հիրիկու՛ն:

Լավագ ասաց. - Ես չըմ կանա էսա մարթու վըրեն, էնիկ ծի տը սպանա: Ինչի՞ց՝ քանի որ իմ գոռզ զանեն էնոր, իսկի յարալու չէնիր:

Էլան, գանցին տուն, ու կըռիվ փայթոստ եղավ:

Խաց կերան, չայ խմեցին, էղավ քըրնելու ժամանակ, Դին Մանգանեն ասաց. - Տու մեհվան ես, հեսոր գըրնա՛, իմ կընգան մոտ պառկիր:

Մարթն ասաց. - Ախըր ծի տը սպանա, ես էրթամ էնոր կընգան մոտ, էն մեկ խավաս, էն քանսար թող չըմընա մեչ իմ սրտին:

Լավագ էլավ, գըրնաց ուր կընգան հոդեն:

Կնիկ ասաց. - Ընչի՞ էկար:

Ասաց. - Քու մարթ ծիկ ասաց՝ տու մեհվան ես, էսոր գըրնա՛, իմ կընգան մոտ պառկա՛, մեր անգանք ընցկոն ա:

Կնիկ ասաց. - Քանի օր տու կուզիս իմ կուշտ պառկիս, ես տաս անգամ խընդ քեզ հավել կուզիմ: Օր տու իմ մոտ պառկիս, քու յարեքը հյու՛-հյու՛ գեշ կեղի, առավոտուն էն քի կը սպանա: Դուխտ էրա Աստծու հանձն, օր ես քե խելքըմ շանքը տամ, քե ազատիմ, տու ծի չըմոռնաս, ընծի քե խամար տանիս:

Լավագ ասաց. - Կի՛ն, ծի անգատա՛, հուխտ էղի, ես քե պիտի տանիմ ու քանի օր սաղ իմ, քե չըմոռնամ:

Ասաց. - Իմ մարթ էսա խագար մարթ էսպես ըսպաներ ա: Դե ելի՛, հավուզըմ կա էսա տեղ, կուլանքանգե սըլեմանի<sup>6</sup> կասեն, էնու ծուր տեղ ա, լավըմ լողկըցի ու արի ինձնե ջուկ պառկի: Չու՛մ առավոտուն քու յարեքը կը սաղնա: Մեկ էլ իմ հիրկան էսա չոքերուց վեր պողպըտե խավավ խագուկ ա, գոռզ յինե հանսար չէնա: Գոռզ զար էնու չոքերուց ցածր: Էնի քե տ՛ ասա, թե. «Գու իմ սիրտ ըստա՛, իմ սրտին զանրկ, տու ընչի՞ կը զանես չոքերուն»: Տու ասա. «Իմ խոր օսյաթ էսպես ա՝ հանանծին օրեր զար սրտին, հիտին օրեր զար չոքերուց ցածր»: Օր կըռվիք չուր հիրիկուն, հիրիկուն քե կասա՝ հեսոր էլ գըրնա իմ կընգան մոտ, տու ասա՝ չէ, հեսոր դար քու՛ն ա, տու գըրնա: Էնի գա՛, ես զէնի լավըմ կը չարչըրեմ, առավոտուն տու էնոր կը սպանես:

Մընաց չուր առավոտուն: Առավոտուն էլան, գանցին կըռիվ:

Լավագ գոռզ կը՛ զանա էնու չոքերուց ցածր:

<sup>6</sup> Սյուլեյմանի ավագան (Ծ.Բ.)

են ասաց. - Յե՛, իմ սիրտ գի ըստն արաց, տիւ ընծի գոռզ կը գանես իմ չոքերուց ցածր:

Լանվոգ ասաց. - Չէ՛, իմ խոր օսյաթ էնպես ա, հանճին օր կը գանես սրտին, հիտին օր չոքերուց ցածր:

Կըռվան չու՛մ հիրիկուն: Յիրիկուն էկան տուն, խաց կերան, պըռճան:

Դին Մանգանեն ասաց. - Լանվո՛գ, հեսօրն էլ գընն ար հօղեն, իմ կընգան մոտ պառկի:

Ասաց. - Չէ՛, հեսօր դար քու՛ն ա, հերեկ ես գանցի:

Մարթն էլավ, գըննաց ուր կընգան մոտ պառկավ:

Կնիկ մարթուն ասաց. - Մարթ, տիւ հերեկ էն ի՞նչ մարթ էր՝ ճամխեցիր իմ մոտ: Ես քյե կը սիրեմ:

Էնպես փաթախեցավ վիզ վեր, չուր լոս չէրող հիրիկ քյներ էր:

Երփի օր առավոտուն յաթղից էլնվ վեր, մարթն լավըմ ճընջըխվեր էր:

Խըլխտուն էլն, կըռվան չու՛մ կեսօրին, Լանվոգ էնոր ըսպանց:

Ըսպանց, էրող կերթա խընդ թակավորի տըղեն: Խի էսա քանի մ՛օր ի՞նչըխ էլնճ, գանցա՞ճ ան, մեռա՞ճ ան, խի ի՞նչըխ էլնճ:

Կնիկ կանչեց փանջարից, ասաց. - Յան՛ գիտի, բեբախտ հիսան, չէ՞ խում կաթ ա կերե, էնու խեր ի՞նչ տ՛ղի: Ես քու կյանքը ազատեցի, մըկա տիւ ճի կը թողնիս, կերթաս:

Լանվոգ տանցավ, էկավ:

Ասաց. - Ա՛յ կնիկ, մինչև մահվան՝ քյե չըմ մոռնա, լե թակավորի տըղեն էսա խիճգ-վեց օր գի սարի մեչն ա, օր քու հիրիկ ճի էպի: Երթամ խի մեռա՞ճ ան, մընացած ան, աչկեմ ու մեկ խորխուրթ էլ կա, կատարիմ, ես ետ կը տանամ, քյե կը տանեմ: Քանի օր քու հիրկան անուն լըսած ան, չըխտ մարթ չըգըխընցա գան քու սարի պիլիր: Տիւ ճի աչկի, չուր ես տանամ:

Լանվոգ գըննաց սար, տեսավ թակավորի տըղեն ի՛նչըխ օր քյինթ-պերնի պառկեր ա, ընցկոն մնացեր ա կըսկըճու:

Գըննաց ասաց. - Ախպե՛ր, ախպե՛ր, հեխ՛ վեր:

Թակավորի լաճ եփի օր տեսավ ըզլանվոգ, շատ ուրախացավ:

Ասաց. - Ախպե՛ր, էլի՛, էսա անքըրին դաստուր տանք, էրթան ուրինց տներ, էնոնց օլուխ-չոջուխ մեղք են, ես, տիւ էր-

թանք: Յան տը մեռինք, յան տ'ազատվինք, տը գանք:

Ասքըրներ տանցան, ետ գանցին: Ու էնոնք մե-մեկ ծի'մ խե-ծան ու շարունակեցին էնոնց ճամբան, գանցին:

Շատ գանցին, քիչ գանցին, էնի Աստված գյինա, ավաիի չը-կընդան, մեկ սարի մեչ մընացին: Հիրիկուն էր, քընան: Լավոգ մընաց հիշար՝ չըլնի թե ջաննավարըմ գա, զուրինք ուտա:

Թակավորի լաճ քընավ, Լավոգ մնաց հիշար: էնոնց քընած տեղ մեկ ծառըմ կեր:

Լավոգ տեսավ, օր իրեք եղվընիկ թըռան էկան, տըրին էն ծառի ճըղի վերեն: Մեկ մերն էր, էրկուսն էլ էնու ծաքեր:

էն ծաքեր մոր ասին. - Մարե՛, էսա դուց թըռինք, մարթ կա էսա ծառի տակ:

Մերն ասաց. - Չէ՛, զավակներ՛, էնոնք գյինա՞ս ինչ մարթ են, մե ըսպանող մարթեր չեն: Մեկ թակավորի լաճն ա, մեկ էլ էնոր ախպըրգյիր: էնոնք կերթան, օր Արևմտյան թակավորի ախչիկ պերեն: Բայց էնոնք ոտնով չըն կանա խասի, շատ գանտն ա ճամբան:

էտոր ծաքեր ասին. - Ապա՞, մարե՛, ի՞նչըլս տ՛ էնեն:

Մեր ասաց. - Գըլխըվեր էրթին ծովու հանի, էնտեղ մեկ սըվ-տակ մարմար քարըմ կա, էն քար շուռ տան, էրկու գան կա էնու տակ, էտա գաներու տերվանք էրկու խատ խըրեղեն ծի են գա մըչ ծովուն: Գաներ թանլին մըչ ծովուն, քաշին, էն ծիյանք կը գան: էտա ծիյանք էնոնց կասեն, թե՛ ի՞նչ կուզեք: էնոնք ասեն, թե՛ մենք կուզենք մե տանեք Արևմտյան թակավորի քաղաք: Մեկ օրեն կը տանեն, կը խասուցեն: Մինակ թե երանի էնոնց մոտեն մեկ հիշար էղի, էրթեն էնպես էնեն:

Լավոգ էսա խաբըրներ լըսավ:

Մընաց չու՛մ առավոտուն, էլան, գանցին, խասան ծովու պը-ռուկ: Մարմար քար տեսան, քար շուռ տըվին, էրկու գան տըկեն խանեցին, թալեցին ծով, քաշեցին, էրկու ծի էկան, ծիյանք ասին՝ տու ի՞նչ կուզեք:

Լավոգ ասաց. - Ես կուզեմ, օր մե տանեք, Արևմտյան թա-կավորի քաղաք խանեք տուս:

Ծիյանք ասին. - Դե՛, ելե՛ք մե խեծեք, համա ծե աղեկըմ պըռնե՛ք վըր մեր քանկին, օր քամին ծե չըթալա տակ:

Էլան, ծիյանք խեծան, կայիմ զինք պըռնեցին ծիերու քանակ, մեկ օր տարան, խանին Արևմտյան թակավորի քանդաք:

Ծիյանք ասին. - Մի պոճեն մեկ-մեկ մազ առեք ու մե թողեք, էրթանք ծով: Եփ ուզեք, էն ժանանակ մենք կը գանք, ծե կը խասինք:

Էնոնք ծիյանքներու պոճեն մեկ մազ առան, ծիյանք թողին, գանցին:

Էնոնք գանցին քանդքի մեջ մեկ ֆուկարի տուն:

Էտա տան մեջ մեկ պառավ կի՛մ կեր:

Ասին. - Պառավ, ըստա թակավորի քանդաքն ա:

Պառավ ասաց. - Խա՛:

Ասին. - Էսա ի՞նչ չալղու, նաղարի, սագի ծեն կը գան:

Ասաց. - Էսիկ մեր թակավորի ախչիկն ա կուզեն:

Ասաց. - Պառավ, օր քյե ճանխինք, թակավորի ախչիկ կանաս տեսնես:

Պառավ ասաց. - Մեռիմ քյե, ես էմլան ֆուկարա, օր էրթամ, էնու տըռան դանգանչիք չըն թողնի մտիմ ներս:

Լանվոզ առավ խարիթ ոսկի փարա, պառավ գըռնաց չարսու մեջ: Մեկ դանտըմ խորոտ, խարսնիսի հարմար խանլավ առեց, խագուց պառվուն:

Մեկ սինի մ'էլ խընծար առավ, երեսի խընծար էսպես կըտրեց, մատնիկ էտի մեջ, էտուր պառվու ծեռ, պառավ գըռնաց խընդ թակավորի սարեն:

Պառավ խասավ ախչըկե հողի տըռան մոտ, տըռնապաներուն մե մեկին մեկ ոսկի փարա էտուր:

Տըռնապաններ ուրախսան, թող տըվին, պառավ մտավ ներս:

Ասին. - Էսքան ժանանակ մարթ մե փարա չեր տըվեր, էսի էտուր, թըխ էրթա ներս:

Պառավ մտավ ներս, խընծար էսպես էտու թակավորի ախչըկեն:

Թակավորի ախչիկ ասաց. - Էս ի՞նչ էնեմ խընծար, քու խընծարներ տա՛ր:

Պառավ ասաց. - Տու էն գանտն ճանրախ օր քյե մոտխըսցեր ա, տու էնա խընծար առնիս, ուտիս:

Էսպես երեսի խընձիր վերուց, վիրուցելու պես խընձիր եղավ  
երկու տապակ: Մատնիկն էրեվաց:

Մատնիկ առավ, աչկեց, օր էնու մատնիկ, ինչ երագի մեջ  
փոխած են:

Շատ ուրախացավ:

Ասաց. - Պառավ, էսա մատընկի տեր դի՞ր ա:

Պառավ ասաց. - Գո մեր տուն կը մընան: Թակավորի լաճն  
ա ու էնու ախպըրոյի:

Ախչիկ ասաց. - Ես ի՞նչ էնեմ, դիրվան՝ էկած ծի կը տանին,  
պետք էր շոտ գյեն: Լե ես իմ խոր մոտեն դաստուր կուզիմ, կեր-  
թամ մեր խաս բանչեն, թը գա, ես գէնի տեսնիմ, ախըր խելին եկե,  
ծի կը տանին:

Ախչիկ մատնիկ առավ, մըտուց ուր մատ, ու պառավ էլնվ,  
տանջավ, գըննաց ուր տուն:

Լնվոգ ասաց. - Պառավ, թակավորի ախչիկ տեսա՞ր:

Պառավ ասաց. - Խա՛, տեսա:

Ասաց. - Դե ծի պատմա՛, խի ի՞նչ ա:

Ասաց. - Ի՞նչ ա, կասեր, թը՛ էնոնք շոտ գյեն, մըկա իմ խե-  
լին էկեր, ծի կը տանեն, թող գյիշեր գա, մտի խաս բանչեն, ես իմ  
խոր մոտեն դաստուր կառնիմ, կերթանք էնտեղ, գիրար կը տե-  
սինք:

Գյիշեր, առավոտման տեմ, Լնվոգ առավ թակավորի լաճ,  
գանցին: Բանչի բանան վե էլնն, մըտան խաս բանչեն:

Ախչիկ թակավորին ասաց. - Դանդա՛, ախըր ծի կը տանին, ծի  
դաստուր տու, ես էրթամ խաս բանչեն ֆըռամ, օր մեկ, երկու օրեն  
ծի կը տանին, չըմնա իմ սրտի վերեն քասար:

Թակավոր ասաց. - Գընա՛:

Թակավորի ախչիկ գըննաց բանչի տառ, օր տը մըտեր բանչ-  
չեն, Լնվոգ ասաց. - Տ՛իյամ պաղկըվեմ, չըլլնի զիգնե ամչընա:

Լնվոգ գըննաց, մըչ ծաղկըններուն պաղկըրվավ:

Հանըղն էլ քընավ: Ախչիկ էկավ, տեսավ, օր թակավորի լաճ  
քընուկ ա: Էնքան կանչեց, էնքան կըլորեց, դեն տարավ, դեն  
էկեր, էնի չիշարցավ:

Լնվոգն էլ կը տիսնա, կըսկըծու կը բանիջի ու չըկանար էրթա  
ծեն տա:

Ախչիկն էլ երկու ճան էտի թակավորու լաճու ջեթ, նշանակ,

թե՛ տաւ ձի լայեղ չես, գյընա՛ն հալա՛ն խընդ ճըժերուն ճան խաղա:

Թակավորի ախչիկ էթող, գյընա՛ց:

Լա՛վոգ էկավ, Գա՛մըդ հիշարցուց:

Ասաց. - Տո քա՛ւ տուն ավիրի: Ախչիկ էկավ, էնքան քյի բո-  
ռաց, էնքան քյե կըլորեց, տա՛ւ ի՞նչըխ չիշարցար:

Ասաց. - Տա՛ւ սուք կասիս:

Ասաց. - Օր ես սուք կասիմ, խի՞ ծեռըտ մըտու քա՛ւ ջերի մեչ:

Թակավորի լաճ ծեռ մըտուց ուր ջեր, օր էրկու ճան կեր էնու  
ջերի մեչ:

Ասաց. - Լա՛վոգ, էսի ի՞նչ ճան ա:

Ասաց. - Ախչիկ օր էնքան ի՛նչըխ երաց, տա՛ւ չիշարցար, էտու  
խամար էրկու ճան էթալ քա՛ւ ջեր, ասաց. «էնի ձի լայեղ չի, էնի  
ճիժ ա՛, թըխ էրթա խընդ ճըժերուն ճան խաղա»:

Թակավորի լաճու դարդ թե մեկ էր, էղավ խազար:

Թողին, էկան պառվու տուն:

Պառավ ասաց. - Լա՛վոգ, տեսա՞ք թակավորու ախչիկ:

Լա՛վոգ ասաց. - Չէ՛, չուր էն էկավ, Գա՛մըդ քյընավ, էնիկ  
էկավ, ի՛նչըխ երաց, Գա՛մըդ չիշարցավ, էթող գյընա՛ց:

Պառավ ասաց. - Ապա ի՞նչըխ տ'էղի:

Լա՛վոգ ասաց. - Էլի՛ գյընա՛, թակավորի ախչիկեն տեսի,  
ասա՛ Լա՛վոգ կասեր, թըխ վաճըն էլ գա՛, չէ թակավորի տղղեն կըս-  
կըծու կը բա՛հջի:

Պառավ էլավ, գյընա՛ց թակավորի ախչիկե մոտ:

Ասաց. - Լա՛վոգ կասեր, թե՛ կը խընթրիմ թող հետօրն էլ գա՛ն  
խաս բաճչեն, թակավորի լաճ կըսկըծու կը բա՛հջի, օր էն էրկու  
ճան թալեց էնոր ջեր:

Ասաց. - Պառա՛վ, գյընա՛ն ասա, թոխ էտօրն էլ գա՛ն բաճչեն,  
ես էտօրն էլ իմ խոր մոտեն դաստուր կուզիմ, բալկը ձի թողնա  
էրթամ:

Պառավ էկավ, Լա՛վոգին ասաց. - Թակավորի ախչիկ կասա՛  
թող էտօրն էլ գա՛ն խաս բաճչեն, ձի տեսիմ, վաճ չէ, մյուս օր ձի կը  
տանիմ:

Լա՛վոգ առավ Գա՛մըդ, տարավ՝ բաճչի մեչ:

Տեսավ օր ախչիկ էկավ բաճչեն: Լա՛վոգ գյընա՛ց, պաղկը-  
վավ, թակավորի տղղեն էլման քյընավ:

Ախչիկ եկավ բանջեն, ի՛նչըխ երաց, թակավորի տղղեն չիշարցավ: Մագե գուևդըմ էթալ էնոր ջեր, ասաց. «Տու ծի յարամիշ չըս էլնի, առ՝ էնա գուևնդ, տար, չուր հիրիկուև խընդ ճըժերուև խաղա»:

Ախչիկ էթող, գընաճ:

Լա՛վոգ էկա՛վ, ասաց. - Տըղա՛, ախչիկ էկեր, տու ընչի՞ քընար:

Ասաց՝ սո՛ւթ կասիս:

Ասաց. - Խի քու ծեռ մըտու քու ջեր:

Ծեռ մըտուց ջեր, օր գուևնդըմ:

Թակավորի լաճն ասաց. - Էսա ի՞նչ մագե գուևնդ ա իմ ջեր:

Ասաց. - Ախչիկն ա տղղե, կասա՛ էնի ծի լայեղ չի, թըխ էնա գուևնդ առնի, էրթա՛ խընդ ճըժերուև խաղ էնա:

Թակավորի լաճու ցավ թե մեկ էր, եղավ խազար:

Թողին, գաճցին պառվու տուև:

Պառավ ասաց. - Լա՛վո՛գ, հեսօր պա՛մ շինեցի՞ք:

Ասաց. - Չէ՛, մարե՛ս, մե ծախորթութեն ա:

- Ապա ի՞նչ էնենք:

Ասաց. - Էլի՛, գընա՛, ախչիկ մեկ էլ տեսի: Ասա՛ Լա՛վոգ կասա՛ խընթրիմ, թըխ էս մեկ տղղին էլ գա՛, տսիկ վերճին անգամն ա:

Պառավ գընաճ ախչըկե մոտ:

Ասաց. - Թակավորի՛ ախչիկ, Լա՛վոգ կասա՛ կը խընթրիմ, տսի վերճին անգամն ա, թե հիշարցավ՝ հիշարցավ, թե չէ՛ թըխ էրթա ուր պաճնին:

Ախչիկ ասաց. - Գընա՛ ասա՛, թըխ հեսօրն էլ գաճն:

Պառավ գընաճ տուև:

Լա՛վոգ ասաց. - Պառա՛վ, թակավորի ախչիկ ի՞նչ ասաց:

Ասաց. - Կասա՛ թըխ հեսօրն էլ գաճն, վա՛ղ անպայման ծի կը տանին:

Լա՛վոգ առավ Գա՛մըղ, հիրիկուև գընաճ, մտավ բանջի մեջ:

Առավոտուև, օր թակավորի ախչիկ էկավ, խասավ բանջի տղղաճն մոտ, Լա՛վոգ Գա՛մըղի մատ կըտրեց տանկով, մե քիչ աղ ըլեց մեջ, ասաց. - Օր էնու քուև չըտանի:

Ախչիկ էկավ, տղղային տեսավ: Դիրարու վիզ գըրկեցին, հիրար պագյեցին, շատ ուրախցան:

Ախչիկ ասաց. - Թակավորի՛ լաճ, էսա էրկու օր էր ես կը գյեր, տու ընչի՞ չիշարներ:

Թակավորի լաճն ասաց, թե՛ ծանորթութեն էր:

Ախչիկ ասաց. - Ապա ի՞նչըխ էնենք, գի ծիկ վնաղ կը տանեն:  
Տիւ տը գնս ո՞ր տեղ ծի տեսիս:

Թակավորի լաճն ասաց. - Չըմ գլիտի, ո՞ր տեղ կուզես՝ գնմ  
քե տեսիմ:

Թակավորի ախչիկ ասաց. - Իմ մոր գլերեզման գի քնաղքի  
էնդեխաց կուշտ՝ ճանխի վերեն: Էնպես մատուռըմ շինած են  
վերեն, վնաղ առավոտուն օր ծի կը տանին, խելին կընցի, իմ ֆայ-  
թոն հետուց կերթա, ես կիծիմ, կերթամ իմ մոր գլերեզման խամ-  
բիւրելու, տիւ արի, էն տեղ պաղկըվի, ես գնմ, զիրար տեսիմք,  
նոր ես կերթամ:

Տըղեն ասաց. - Շա՛տ լավ:

Խոսք տվին, խոսք առան, ախչիկ էլնավ, գլընաց:

Լնվոգ էկավ, ասաց. - Է՛յ, դաստնաբրա, քիւ նպատակին  
խասա՞ր:

Ասաց. - Ախպե՛ր, քիւ ջան սաղ կենա, ես իմ նպատակին  
խասա, լե ի՞նչ էնենմ, օր կը տանին խըլիսուն:

Լնվոգ ասաց. - Հանը՛ղ, չըխո իսկի քե պն՝մ չասա՞ց:

Թակավորի լաճն ասաց. - Ձի էսպես ասաց, թե՛ արի ճանխի  
վերեն, իմ մոր գլերեզման ճանխից տիւսն ա, արի էնու մատուռի  
մեչ պաղկըվի, ես կը գնմ էն տեղ, կիծիմ տակ, իմ մոր գլերեզման  
կը խամբիւրիմ, էն տեղ քի կը տեսնամ ու կը թողիմ կերթամ:

Լնվոգ ասաց. - Շա՛տ լավ:

Էլնն, գնցին պառվու տուն:

Խըլիսուն՝ պատրաստված խելին, գի կը գննին, կը խաղան  
ու առան ախչիկ, կերթան:

Լնվոգ ասաց. - Հանը՛ղ, տիւ մընացեր ըստն, ես էրթամ էնու  
մոր գլերեզմնատուն պաղկըվիմ:

Հանըղ մընաց, Լնվոգ էլնավ, գլընաց: Էնու մոր գլերեզմնա-  
տուն կընդնավ, պաղկըվավ մեչ:

Տեսավ օր խելին էկավ, ընցավ, վերչ ախչըկե ֆայթոն էկավ:

Ախչիկ էճնավ, էկավ մոր գլերեզմնատուն, օր խամբիւրա,  
տեսավ խորոտ ջըհել տըղա մ՛ էտա տեղ պաղկըվեր էր, էլնավ  
տիւս:

Ախչիկ ասաց. - Էսի թակավորի լաճ չէր:

Լավագ ասաց. – Մը՛ վնխենա, ես էնոր ախալըոգյիրն եմ, էնու խետն եմ իկի:

Ախչիկ ասաց. – Պառավ կասեր՝ քու անուն Լավագ, լե չուն մըկա քյե չըտեսեր իր:

Ասաց. – Ապա ի՞նչ էնենքյ:

Լավագ ասաց. – Քու ջըլեր տու ես խագյիմ, էղիմ խարս, նըստիմ ֆայթոն, էրթամ խընտ խելուն, տու իմ ջըլեր խագյիր, տանոցիր, գյընն պառվու տուն:

Էնի ախչըկե ջըլեր խագան, ախչիկն էլ էնու ջըլիր խագան, Լավագ գյըննաց, նըստավ ֆայթոն, գյըննաց խընդ խելուն:

Բեղ-մուրուս օր չուներ, էնոնքյ գյիտցան, թե ախչիկն ա:

Խելին առավ, ինքյ ինքյ գյըննաց, ախչիկ մընաց մոր գյերեգ-մընի մեչ, մարթու խավըներ խագուկ, չուր քիչըմ վերճ էլնվ, գյըննաց պառվու տուն:

Մարթըմ չըճանցցավ գինքյ, ապա մարթու խանավ կեր վերեն:

Գյըննաց պառվու տուն: Թակավորի լաճ տեսավ, օր Լավագի ջըլերն ա, լե ինքյն Լավագ չի: Չըճանչըցավ:

Ասաց. – Ի՞նչ կը պըշկիս, ես թակավորի ախչիկն եմ:

Շատ ուրախացան, մընացին պառվու տուն:

Թակավորի լաճն ասաց. – Ախչի՛կ, ապա Լավագ ի՞նչ էղավ:

Ասաց. – Իմ տեղ գյըննաց հիրկան, օր չիմնեն:

Էնոնքյ մընացին էտա մաննախի մեչ Լավագի խամար, թի չէլնիր՝ հիմանան, Լավագին ըսպանեն:

Տաննանքյ Լավագի կըսի վերեն:

Լավագ առին, տարան թակավորի սարեն:

Կը տանին փըսակին: Լավագ կը տեսնի, օր մեկ ըխթիյար թակավոր մ'ա, օր էնու վերեն կը փըսակին:

Եփ օր հիրիկուն կեղի, թակավոր կասա. – Արի՛ մեր տեղ թա՛լ, պառկինքյ:

Թակավոր գինն օր ախչիկ ա:

Լավագ կասա. – Մեր ցեղակնի օսյաթ էնպես ա, մինչև տասնուխինգ օր հիրկան մոտ չըպիտի պառկինքյ, տասնուխինգ օր թըմըմի, նորեն կը պառկինքյ:

Կը խապա թակավորին:

Թակավորին ախչիկըմ կա, շատ խորոտ կեղի:

Թակավորի ախշիկ եփ օր Լավոգի կը տեսի, կասա. - Ափսո՛ս, օր տաւ ընցնա ջահել կին ես, քյե պերած են իմ խալիվոր խոր: Հիմա տաւ մարթ էղեր, ես քյե տ'առններ, մենքյ հիրար վայելենքյ:

Լավոգ ախշըկեն կասա. - Եթե ես մարթ էղեր, տաւ ծի կառնե՞ր:

Ախշիկ կասա. - Խա՛, ապա ես էլ քյե պես խորոտ ո՞ր տեղ տը կընդըներ:

Լավոգ կասա. - Ախշի՛կ, ես տը խընթըրվիմ Աստըծուց, բալկո ծի մարթ էնա, ես քյե առնիմ, փախիմ:

Ախշիկ կասա. - Շա՛տ լավ, ես սիրով կուզիմ:

Կը մընա չուր մեկէլ առավոտուն: Առավոտուն ախշիկ կը գա՛ սենյակ:

Կասա. - Իմ խորթ մեր, տաւ Աստըծուց խընթրեցի՞ր, օր մարթ տաննաս:

Կասա. - Խա՛, խընթրեցի, մարթ եմ տանցե:

Ախշիկ չավատա: Կը նայա, օր մարթ:

Ախշիկ ուրախութենե՛մ խելքից, մտքից կէլնի:

Ասաց. - Տաւ մարթ տանցար, ապա քաւ անուն տընիք ի՞նչ:

Կասա տըղան. - Իմ անուն Լավոգ տը տնիմ, ինչի՞ օր ջահել տըղա եմ:

Ախշիկ կասա. - Լավո՛գ, ե՞փ էրթանքյ, ե՞փ փախիքյ, ի՞նչըխ փախիքյ, էսի թակավոր մ'ա: Էնու գորք շատ, թել կը տա՛ մեր ճամխըներ կը պըռնեն, մե երկուսն էլ կը մորթեն:

Լավոգ կասա. - Ախշի՛կ, մը՛ վախենա, տաւ քաւ պատրաստութեն էրա: Ես էնպես ծիյանքյ ունիմ, օր քսան ավուր ճամբախ՝ մարթաւ մեկ օր կը տանին: Էլ անքար, թելկըրաֆ, մեր ճամբախ կըտրել էլ ֆայդա՛ չէնա:

Ախշիկ էնու պատրաստութեն տեսավ, օր առավոտ ճամբախ տ'էլին:

Լավոգ ծիու մազ էխան, էտու կրակ, ծիյեր էկան:

Մեկ ինքյ խեծավ, մեկ ախշիկ: Ինգան ճամբախ:

Հիմացան, քաղքի մեչ կանչեցին թե՛ թակավորի կնիկ օր պերին, տըղա էր, ախշիկն էլ փախցուց:

Թելկըրաֆ տըրվին ճամխըներ կըտրելու, անքար էլանվ, ընգանվ հետեվեն, ֆայդա՛ չէրաց:

խըրեղեն ծիյանք մեկ օրեն էնոնք էնու խողեն խանին տհու:

Գանցին ախչկա խոր քանղաք, պառվու տուն: Տեսան օր Գանդը, թակավորի ախչիկ նըստած են դան:

Շատ իրարու վերեն ուրախացան:

Թակավորի ախչիկ Լանդոգին ասաց. - Օր տու էնպես լավ մարթ ես, օր համ ձի ազատեցիր, համ քյե կնիկըմ պերիր, իմ ճըկըթի մատնիկ տը տամ քյե նվեր:

Մատընկի գյին էրկու հարուր ոսկի էր:

Մընացին պառվու տուն չուր առավոտուն: Առավոտուն էլան, խըրեղեն ծիյանք խեծան, մեկ մեկ կնիկ տըրին էնոնց թանք, գանցին: Էլան էն ծովու էն մեկէլ էրես, օր մանրման քանրի տըկեն գաներ խանած են:

Ծիյանք ասին. - Լանդոգ, մեր պայման չուր ըստեղ էր, մեր գաներ խանեք, տըրեք էսա քանրի տակ, տուք էլ գանցեք խընդ ծեր ճամխին, մենք ծե ծեր մըրազին խասուցինք:

Գաներ տըրին քանրի տակ, ծիյանք քանչվան ծով, էնոնք չորս էլան ինգան ճամբան, հուշիկ-հուշիկ կը գան խընդ թակավորու լաճու խոր սարեն:

Էկան, մընացին գյիշեր էն ծառի տակ, օր էն մեկէլ անգամին մընացած են:

Եփ օր էղավ հիրիկու, թակավորի լաճ, էնու կնիկ պառկան քըլնան, Լանդոգ չըքըլնի:

Լանդոգի կնիկ ասաց. - Լանդոգ, տու հե՞ր չըքըլնիս, էնոնք քըլնան, արի՛ ես, տու էլ քըլնինք:

Լանդոգ ասաց. - Թե մենք էլ քըլնինք, ջանանվան կը գան, մե չորսն էլ կը վնասա:

Լանդոգ չըքըլնավ:

Էտա իրեք եղվընիկ, մեր, էրկու ծանքու խետ էկան, թառան էտա ծառի վերեն:

Ծանքեր ասին. - Մարե՛, էսա տեղ մարթ կա, թըռնինք, մեզի չըվընասեն:

Մեր ասաց. - Չէ՛, էնի թակավորի տըղան ա, ուր դանստանրեն, օր գանցին ախչիկ պերին: Էնու պերին, լե ուրենց մըրազին չըն խասնի: Թակավորի լաճ խընդ Լանդոգին բեբանտուրին տ'ենա:

Ծանրեր ասին. - Մարե՛, ինչպե՞ս մըրագին չըն խասի:

Ասաց. - Իմ խոսքեր լըսող մարթ վի՛ր պատմա, աչկեր կը կուրնա: Թակավորի տղղեն էն օր, օր կերթա ուր տուն, ուր հօղեն պառկի, ջաննավարըմ՝ անուն Քյառքյառթոշ, տը գա՛, զխարս, փեսեն գյիշեր ուտա, օր հիշար մարթ իմ խոսքեր լսի ու թակավորի տղղին ասա՝ հիշար կաց քյեզնից, էնու աչկեր տը կուրնա:

Էնոնք թռան, գացին:

Առավոտուն թակավորի լաճ քյընուց էլնվ վեր, էլնն ընգան ճամբախ, գացին:

Շատ ու քիչ երթալ Աստված գյինա: Թակավորի քաղքյին մոտխասցան:

Ջուլյաբ գյընաց թակավորին, թե՛ քիւ տղղեն գյընաց, ուր կնիկ առավ էկավ, շնորհիվ Լնվոգին:

Թակավոր ուրախցավ, էլնվ տեմքյըններ ուր տղղի, Լնվոգի ճակատ պագյեց, շնորհակալ էղավ, օր էն էսպես պարիարու-թինըմ էրեր էր խընդ ուր:

Թակավոր էպիր, հաննաճին Լնվոգ փսակեց, ասաց. - Իմ ճոչ լաճն էն ա:

Նորեն Գանըդ փըսակեց:

Յոթ օր, յոթ գյիշեր էնոնց խաղտուն էրաց:

Գացին, գյիշիր կը պառկեն թակավորի տղղեն, ուր կնիկ:

Լնվոգ ասաց. - Չե՞ խավքյեր ձի պան ասին: Ես գացի, չարչըրվա, էսա ախչիկ պերի, եփ օր վընասվեն էսա գյիշեր, էլ իմ գախմա՛թ չընգի՞ ճուր: Գըմենից լավ ա, օր երթամ էն սենյակի մեչ պաղկըվիմ, պախենմ, պախպանենմ զէնոնք չու՛մ առավոտուն:

Լնվոգ գյիշեր էլնվ, գյընաց թակավորի լաճու սենյակի մեչ:

Էնոնք օր պառկան, գյիշեր շատ, քիչ ընցավ, օր Լնվոգ տեսավ փանջարից Քյառքյառթոշ էկավ ներս:

Պերան պաց էրաց, օր տը խասեր վընասեր ըզպանկողներ, ինքյն ուր թուր քաշեց, Քյառքյառթոշին լավըմ պրտեց:

Մեկ պուտ արուն թըռավ թակավորի լաճու կընգան ճակտի վերեն:

Լնվոգ ասաց. - Ի՞նչ էնենմ, թրի ծերով վիրուցե՛մ, վախենամ՝ ախչըկա էրես յարալու էղի: Երթամ իմ լեզվով վիրուցե՛մ, վախենամ թե ժահր էղի, ձի ըսպանա:

Ասաց. - Վալլա՛, ես տ'երթամ իմ լեզվով վիրուցեմ, ճակատ չ'եղի լնքն, թոխ ես մեռիմ:

Ինքն գլընաց, կըզվնավ, լեզվով էտա արուն լիզեց:

Լիզելու ժամանակ թակավորի տղղեն հիշարցավ:

Ասաց. - Վո՛ւյ, բերնխտ հիսան, տու իմ կընգան էրես պագ-յեցի՞ր: Թե օր տու շատ կուզեր, թը տու քե խամար պերեր:

Լնվոգ ասաց. - Թակավորի՛ լաճ, ես քու կընգան էրես չըմ պագյեր, հուրուշ գործըմ կեր: Խի ի՞նչ կասես էնա ջաննավնրին ինչ ըսպանեցի: Էն խընթու խամար քու կընգա ճակատ լիզեցի:

Հանըղ չավատաց, ասաց. - Ոչի՛նչ, տու ջաննավնրըմ պերեր ես ըստն, ըսպաներ ես:

Խոսք մ՛ էնու մոտեն, մեկ էնու մոտեն, թակավորու խարս հի-շարցավ, էլնվ նըստավ:

Վերչ Լնվոգ ասաց. - Ես իմ խաց խարամ չըմ էնե, էլ ֆայրն չէնե, ես կըսա տ'էնեմ էնոր, թոխ իմ աչկ կուրնա, օր էնի ավատա:

Ասաց. - Հանը՛ղ, ականջ էրա, ասեմ, թոխ իմ աչկեր կուրնա: Էն ժամանակ, ինչ գացիքք քու կնիկ պերելու, էն ծառի տակ օր տու քընար, ես մընացի հիշար: Իրեքը եղվընիկ էկան էն տեղ: Մեկ մերն էր, էրկու ծնքեր:

Ծնքեր մորն ասին՝ թըռիքք, էսա մարթեր մե չըվընասեն:

Մեր ասաց. - Չէ՛, էնի թակավորի լաճն ա, ուր դնստնթրեն, կերթան Արևմտյան թակավորի ախչիկ պերեն: Բայց էնոնք ոտնով չըն խասիր: Երանի մեկ հիշար էղներ, ասաց, ես էնոնց պն մ'ասեր:

Ծնքեր ասին. - Ի՞նչ տ'ասեր տու:

Ասաց. - Էնոնք գլըխըվեր էրթեն ծովնփ, էնտեղ սըվտակ մարմնր քնրըմ կեր: էնու տակ էրկու գնմ էր, գնմեր օր թնլեն ծով, էրկու խրեղեն ծի կը գան, խեծին, էրթեն: Թե չէ՛ էնոնք ոտ-նով չըն կանա խասի: Թակավորի՛ լաճ, էնպե՛ս չեր: Մենք գն-ցի՞նք ծովնփ, սըվտակ քնր շուռ չըտըվի՞նք, գնմեր չըխանի՞նք տուս, թնլիցիքք ծով, ծիյանք էկան, խեծանք, ծովն ընցանք:

Թակավորի լաճն ասաց. - Խա՛, քու խոսքն ա:

Լնվոգ ասաց. - Օր էն տեղեն տանցանք, էկանք, էլըմ չըպառկա՞նք էն ծառի տակ: Տու քընաք, ես մընացի հիշար, էլ-ման էն եղվընկներ էկան, թառան ծառի վերեն:

Ծանրեր ասին. - Մարե՛, էլի՛ թըռնիմք էրթանք, էսա տեղ  
ինս-ջինս կա, մե չըսպանին:

Մեր ասաց. - Չէ՛, էնի թակավորի լաճն ա ու իր դաստանքերն:  
Պերին, լե էնոնք էնոնց մըրագին չըն խասիր:

Ծանրեր ասին. - Յե՞ր, մարե՛:

Ասաց. - Քյառքյառթոչըմ տը գան թակավորի լաճու սենյակի  
մեչ, երկըսին էլ վընասա: Լե լըսող օր լըսավ ու թակավորի տըղին  
ասաց, էնու աչկեր տը կուրնա, էնու սերին էնպես ա:

Եփ օր ես էկա, Քյառքյառթոչ ըսպանեցի, պուտըմ արուն  
ընգավ քու կընգան ճակտին: Ասի թըրով վերցե՛մ, վանխեմամ՝  
ախչըկե ճակատ եղի յարա, լեզվով վերցե՛մ, վանխեցա՝ ժանի եղի,  
ծի ըսպանա: Ես իմ ջան ընցա, լեզվով վերցի, ասի թըխ կընգան  
ճակատ լանքա չեղի, տու մըկա կասես՝ իմ կընգան էրես պագյես,  
մըկա մընչ մե երկուս վո՞ն ա բեբախտ:

Խոսք վերճանալու պես՝ սերի էր, Լանվոգի աչկեր կուրցավ:

Թակավորի լաճն ու խարս էլան, բոռացին, աղաղակեցին,  
ոնչինչ ֆանդան չերաց:

Չուր առավոտուն թակավոր հիմացավ:

Գյընանց տըղի մոտ, խառցուց տըղին ու խարսին, միտք  
հիմացավ:

Տըղին ջանադ պիտի տեր: Վերչ սուրգուն էրաց:

Ասաց. - Թըխ չըտեսնիմ ինչպես բեբախտ տըղա, օր Լանվոգ  
խընդ իմ տըղեն դըհա հանվել էր, ինքյն բեբախտութին էրաց, էնու  
աչկեր կուրցավ: Էնպես տըղա չըպիտի տեսնիմ:

Եփ թակավորին տըղեն տընից տուս էլանվ, ասաց. - Պիտի  
էրթամ էն ծառի տակ, խի էն խավքեր մեկ էլ չը՞ն իգան, մեկ  
տեղըմ, տանրման մ'ասին էնու աչկերու խամար:

Թակավորի տըղեն գյընանց խընդ էն երկիր:

Գյընանց, գյընանց էն ծառի, գյիչեր մընաց էնտեղ:

Յանխու՝ քուս չըտանի: Տեսավ՝ իրեք եղվընիկ թըռան, էկան  
վըր էն ծառին տըղին:

Էն երկու ծանր մոր ասին. - Մարե՛, թըռե՛նք, մարթ կա ծառի  
տակ:

Մեր ասաց. - Չէ՛, էնի էն բեբախտ թակավորի տըղեն ա, օր  
բեբախտութին էրաց Լանվոգի, չու՛մ Լանվոգ ճարախատ՝ պատմեց  
իմ ասած պաներ, ուր աչկեր կուրցավ:

Ծափեր ասին. - Մարե՛, ապա ի՞նչըխ տ'եղի: Էնու աչկեր չու՛մ ե՞փ տը մընա էմալ կոծ:

Մեր ծափերուն ասաց. - Օր մենք մըկա կը թըռիքք, մեր թևն մեկ թերուռ կընգի: Իմ թերուռ օր տանի, յոթ հախալըրի ճուր ժողվա, խառնա հիրար, էտա թերուռ թաթխա հիմն, քըսա էնու աչկեր, Աստըծու խըրամանքիվ էնու աչկեր կը պանգվի: Թե չէ՛ թու չարա չըկա:

Եղվընիկներ թռան, գանցին: Էնու թևն թերուռըմ ինգավ գյետին:

Մընաց չու՛մ խըլխուռն, թակավորի տըղեն էլնավ, կան էկավ, էնտեղ էն թերուռ կընդնավ, ուրախացավ, առավ թերուռ, տանցավ խընդ խոր էրկիր:

Գյընաց՝ Լնվոգ գո տըրած էն մեկ սենյակի՛մ մեչ, խանց, ճուր կը տան, կուտա, կը խմա:

Յոթ հախալըրի ճուր էպե, խառնեց հիրան, թերուռ թաթխեց հիմն, Աստըծու խըրամանքիվ պանգվավ, էլնավ հանճիհի պես:

Ջուլաթ տըղիմ թակավորին, թե Լնվոգի աչկեր սախցեր ա:

Թակավորի լաճ նոր վըր էնու հիշարցավ, ասաց. - Էսա մարթու ասածներ հըմեն ճիշտ են, կը խի՞ս, խավքերն էկան, խընդ ձի գրուցեցին: Ես էր բեբախտ, օր չըր ավատա էնու ասածին:

Ասաց. - Ես քու Աստծո՛ւն մեղա, Լնվո՛գ, տու իմ ճոչ ախպերն, ես քու պստիկ ախպերն: Եփ օր իմ խեր մեռի, իմ խոր մալ կես ձիկ, կես քեզ:

Օրըմ ընցավ, էրկու ընցավ, Լնվոգ մըտածեց, ասաց. «Յա՛, հո՛, էսա ընցավ էրկու տարի, Դին Մանգանի կնիկ օր իմ կյանք ազատեց, ես ի՞նչըխ իմ մոռեր»:

Էլնավ էն մեկէլ օր, ասաց. - Թակավորի՛ լաճ, ես կերթամ:

Թակավորի լաճն պսաց. - Դա՞ր կերթաս:

Ասաց. - Յէնօր, օր անքան կոտորեցին, օր ձի պըռնեցին տարան, օր տու մընանցիր սարի մեչ, էն մարթու կնիկ իմ կյանք ազատեց, ձի ճարըմ շանց խուռ, էնու հիրիկն ըսպանեցի, լե խոսք տըղի, օր էնոր տեր էլներ, առներ պիրեր: Էնա էղավ էրկու տարի, օր իմ մըտից խաներ են: Մըկա նոր ինգավ իմ միտ:

Ասաց. - Լա՛վ, տու կերթաս, ձի չը՞ս տանի խետ, չէղի քյե պա՛ մ'եղի:

Ասաց. - Չէ՛, մեկ անգամ քիւ բախտ տեսեր եմ, մի գա՛, էկա՛  
էկա, չէկա՛ չէկա:

Լա՛վոգ էլա՛վ, գյընա՛ց: Շատ գյընա՛ց, քիչ գյընա՛ց, էնի  
Աստված գյինա, կընգա՛ն սարին խասավ:

Գյընա՛ց, տառ էպա՛ց, մըտավ ներս, ըխավ օր կին նըստուկ  
էր, մեկ մարթ մ'էլ կընգա՛ն կողքին նըստուկ էր: Էնպես մեծ մարթ  
մ' էր, օր էնոր Դև կասեն:

Կնիկ օր աչկ ընգա՛վ Լա՛վոգ, ըսկըսեց լա՛ց:

Ասաց. - Օղորթ հիսնին բախտ չըկա, ես չավատեր: Օր ծի  
թողիր ըստեղ մեքա՛ւ, գա՛ցիր, էսա էրկու տարի մարթ չէկավ վըր  
ծի, չըպատահավ, հէսօր էսա մարթ էկավ, ծեռն էտիր վըր ծի,  
ասաց՝ տա՛ւ իմն իս: Տա՛ւ չըս կանա էլ ծեռքեն ա՛գա՛տի, քյե տը  
վընասա:

Դև օր տեսավ մարթ մտավ ներս, ասաց. - Յե՛՛, ինսըն-  
ջընսն, խավքյն ուր թևով, օցն ուր պոռտով ըստեղ չըր կանե գյե,  
տա՛ւ ինչպե՛ս ես էկե:

Դև էլա՛վ, օր մարթա՛ւն տը վընասեր:

Դև կա՛նավ, ասաց. - Դե՛, Լա՛վո՛գ, մենքյ բեբախտութնով  
իրարու չընքյ ըսպանե, էլի, ես գի կանիմ, տա՛ւ դըրբըմ գա՛ր ծի,  
եթե ծի վընասեցիր, չըխտ կնիկ քյոն ա, կառիս կէրթաս: Եթե  
չըվընասեցիր, ես կը գա՛նեմ քյե, քյե կը վընասիմ, կնիկ կառնիմ:

Լա՛վոգ ասաց. - Յէսօր ես եմ եկե, դըրբ քյոն ա, հա՛նճեն քա՛ւ  
դըրբ գա՛ր:

Դև էլա՛վ, գոռգ մ' էգա՛ր Լա՛վոգին:

Գոռգ չըտիպավ Լա՛վոգին, լե գոռգի քա՛մին զԼա՛վոգ թըռուց  
մեկ տեղ:

Դև ասաց. - Յե՛՛, խողածի՛ն, խող էր, ի՞նչ շոտ խող դա՛ռցար:

Ասաց. - Չէ՛, գի ես տա՛ սաղ եմ, Աստված օր իմ խոգին չառ-  
նի, տա՛ւ չես կարող առնիլ:

Ասաց. - Դիւր խասավ ծի, Դև՛, կանի, դըրբ մ'էլ ես գա՛նիմ քյե:

Լա՛վոգ թուր մ'էթա՛լ Դևու մեչք: Թա՛լելուն պես ջանտա՛կ կի-  
սեց, կըտորներ մընացին վըր հիրարու, Դև չիմացավ, թե ինքյ  
կիսվեր էր:

Դև ասաց. - Լա՛վո՛գ, քա՛ւ դըրբ էտի՞ն էր:

Լա՛վոգ ասաց. - Քյե մեկ հիրա՛ր տուր:

Յիրար տալուն պես կըտորըմ տեն գյընա՛ց, մեկ տեն:

Ինքն մընաց չուր առավոտուն, առավ կնիկ, էկավ: Առավ,  
էկավ թակավորի սարեն:

Համըդ օր տեսավ Լավոգ էկավ, էլավ, գընաց անձ:

Էնոր քոկ սարե՛մ շինեցին, Լավոգ, ուր էրկու կնիկ հինե  
մընացին, չուր օր թակավոր մեռավ:

Լավոգ ասաց. - Համը՛դ, տու կասեր, օր իմ դանդին մեռի,  
էնոր մալ կես ծիկ ա, կես քյիկ ա:

Համըդ ասաց. - Հիմա օր իմ մալի կես տամ քյե, խալխ պի-  
տի կասկածեն, թե թակավորութեն կը պաժնա: Թը մընա, քանի՛մ  
տարի ընցի, յան ծի լաճըմ կէղի, քյե ախչիկ, յան քյե լաճ կէղի, ծի  
ախչիկ, կը տանքյ հիրարու, թըխ ելին, էն մալ վայելեն, հան քու  
տըղեն ա, հան իմ, էտա մալ կէղի կիսրար:

Քանի՛մ տարի օր անցավ, լաճ մ՛տլավ Համըդին, ախչիկ մ՛ե-  
ղավ Լավոգին:

Հիրարու վերեն փըսակեցին, մինչև Լավոգ, Համըդ  
ծերացան ու մեռան, թակավորութեն մընաց Լավոգի ախչկան ու  
Համըդի լաճուն:

Էրկըսվի պանծինքյն էլ մընաց մեչ թակավորութին:

